1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

#### 4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2. Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

---

ընկերության անվանումը

---

ընկերության հասցեն

---

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

---

ընկերության բանկային հաշվեհամարը

---

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

---

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

\* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

<b>ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*</b>	
1. Թիվ	
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝	
6. Վճարողի հաշվի համարը՝	
7. Վճարողի ՀՎՀՀ	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108	
12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13. Շահառուի հաշվի համարը (հշ.Ն) 900015211429	
14. Գումարը (թվերով և բառերով)՝	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16. Արժույթը (բառերով և կողով)՝	
17. Գործարքի (վճարման) նպատակը՝ <i>(որակավորման ապահովման համար)</i>	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները  / _____ /  / _____ /  22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝  / _____ /  / _____ /  21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն  / _____ /  /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն  / _____ /  /ստորագրություն/

24.բ.	Կ.Տ.	23.բ.	Կ.Տ.
24.գ	"___" ___ 20___ թ.	23.գ. Կատարման ամսաթիվը՝	"___" ___ 20___թ.

\* Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարզադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

Հ/Հ	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված)	Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված)
1	2	3	4	5
1.	Փաստաթղթի անվանումը	պարտադիր	պարտադիր	Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր>
2.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս
3.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:
4.	Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	լրացվում է վճարողի կողմից
7.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
8.	վճարողի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի	լրացվում է վճարողի կողմից

			Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	
9.	շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
10.	շահառուի ՀԾՀ	պարտադիր	ոչ պարտադիր (գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում)	(չի լրացվում)
11.	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
12.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
13.	շահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
14.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
15.	Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով)	պարտադիր	ոչ պարտադիր (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում)	(չի լրացվում եւ չի կիրառվում)
16.	արժույթը (բառերով և կողով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
17.	գործարքի նպատակը	պարտադիր	Պարտադիր լրացվում է «պայմանագրի կատարման ապահովման համար» բառերը	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
18.	Վճարման կատարման հիմքերը՝	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի	լրացվում է շահառուի կողմից



			ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի,	
19.	Վճարման պայմանները՝	պարտադիր	պարտադիր լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը, որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար	նախապես լրացվում է շահառուի կողմից
20.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին) Եթե ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է:	լրացվում է շահառուի կողմից
21.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը:	ստորագրվում է վճարողի կողմից կամ դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը
21.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով	կնքվում է վճարողի կողմից թղթային եղանակով ներկայացնելիս
22.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	Պարտադիր՝ լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
22.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից թղթային եղանակով բանկ ներկայացնելիս
23.ա	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի)	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային	

	աշխատակցի ստորագրությունը		եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում	
23.գ	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	
24.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) դրոշմակնիքը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	
24.գ	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա	

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ----- ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N \_\_\_\_\_**

ք. \_\_\_\_\_

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

«\_\_\_\_\_», ի դեմս ----- -ի, որը գործում է -----  
կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս տնօրեն -----  
-----ի, որը գործում է ----- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից,  
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Առողջության ապահովագրություն»  
փաթեթի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն  
պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված  
Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-  
գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝  
առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման  
ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը  
պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել  
Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով  
նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար  
վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:  
Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված  
պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան  
մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում  
այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա  
գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի  
կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով  
նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:<sup>16</sup>

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:<sup>17</sup>

2.4.6 շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:<sup>18</sup>

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և

<sup>16</sup> Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:

<sup>17</sup> Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:

<sup>18</sup> Կիրառվում է, եթե կնքվում է նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության ծառայությունների մատուցման պայմանագիր:

պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է \_\_\_\_\_ (տառերով) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:<sup>19</sup>

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>22</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

<sup>19</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

<sup>20</sup> Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:<sup>21</sup> Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

<sup>22</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:<sup>24</sup>

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:<sup>25</sup>

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>25</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համադրել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

-----  
(ստորագրություն)

Կ.Տ.

-----  
(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների և շախմատի դպրոցների աշխատակիցների համար առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ միավորի գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը /մարդ/	Ժամկետը
						1. ձեռք բերման 2. մատուցման
1	66511120/1	<p><b>I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ</b></p> <p>1. Ապահովագրական գումարը՝ 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:</p> <p>2. Փաթեթը ներառում է հիվանդանոցային պայմաններում սուր, անհետաձգելի և պլանային ստորև նշված բուժօգնությունը, հիվանդանոցային ձևով իրականացվող այն փաստորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը (այդ թվում՝ հիվանդանոցային ձևով իրականացվող այն փաստորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, առանց որոնց իրականացման հնարավոր չէր մատուցել տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը), տարեկան մեկանգամյա կանխարգելիչ բուժզննումը:</p> <p>3. Ապահովագրական ընկերության կողմից անհրաժեշտ է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչություն ներկայացնել եռամսյակային կտրվածքով տեղեկատվություն, առողջության ապահովագրության փաթեթից օգտված շահառուների թվաքանակի և փոխհատուցված գումարի վերաբերյալ:</p> <p><b>II. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ</b></p> <p>4. Հիվանդանոցային բուժօգնությունը ներառում է՝</p> <p>1) թերապևտիկ բուժում պահանջող հիվանդությունները.</p> <p>2) վիրաբուժական բուժում պահանջող հիվանդությունները, այդ թվում՝</p> <p>ա. նյարդավիրաբուժական, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետերի, միկրոպարոյրի կամ օնիքսի արժեքը),</p> <p>բ. սրտի վիրահատական և ներանոթային միջամտությունների իրականացում (ընդ որում, կորոնար անոթների ստենտավորման փոխհատուցումը ներառում է դեղապատ</p>	դրամ	մինչև 3128	1. 2020թ. 2. առողջության ապահովագրության վկայագրի տրամադրման օրվանից 365 օր	



		<p>արժեքը), այդ թվում՝ սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա.</p> <p>3) վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) վիրահատական և ոչ վիրահատական բուժումը.</p> <p>4) էլեկտրահարությունների, այրվածքների և ցրտահարությունների վիրահատական և ոչ վիրահատական բուժումը:</p> <p>5. Հատուցման ենթակա են՝</p> <p>1) բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, այդ թվում՝ հիվանդին հիվանդասենյակով ապահովումը, մասնագիտացված կոնսուլտացիաները, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը, վիրահատական և կոնսերվատիվ բուժումը, վիրահատական և ֆիզքսող միջոցները, բուժական միջամտությունները, անհրաժեշտ դեղերով ապահովումը, աշխատակազմի աշխատանքի վարձատրությունը, կոմունալ և տնտեսական ծախսերը.</p> <p>2) հիվանդանոցային ձևով իրականացվող այն հետազոտությունները, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը (այդ թվում՝ հիվանդանոցային ձևով իրականացվող այն ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, առանց որոնց իրականացման հնարավոր չէր մատուցել տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը).</p> <p>3) չարորակ նորագոյացությունների ճառագայթային բուժումը, ընդ որում, հեռահար ճառագայթային բուժումը՝ տարեկան ոչ ավելի, քան 35 սեսանսը, ներխոռոչային ճառագայթային բուժումը՝ տարեկան ոչ ավելի, քան 10 սեսանսը.</p> <p>4) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկում ընդգրկված հիվանդությունների և վիճակների բուժումը: Ընդ որում՝ վերակենդանացման բաժանմունքներում նշված հիվանդությունների և վիճակների բուժման փոխհատուցումն իրականացվում է ոչ ավելի, քան 10 օրվա համար:</p> <p>6. Հատուցման ենթակա չեն՝</p> <p>1) հիվանդանոցներում հատկացվող սննդի, առանձնահատուկ հարմարավետ հիվանդասենյակների և անհատական խնամքի համար սահմանված վճարները.</p> <p>2) անհաղթահարելի ուժի ֆորս-մաժորի (միջուկային պայթյուն, ճառագայթային, ռադիոակտիվ կամ քիմիական վարակ, ռազմական գործողություններ, քաղաքացիական պատերազմ, հասարակական հուզումներ) հետևանքով առաջացած հիվանդությունները:</p> <p>7. Առողջության ապահովագրության փաթեթի շրջանակներում բոլոր հատուցումներն իրականացվում են ապահովագրական ընկերությունների կողմից բուժհաստատություններին վճարումներ իրականացնելով, իսկ առողջության ապահովագրության պայմանագրով սահմանված դեպքերում՝ ապահովադիրներին (ապահովագրված անձանց)՝ իրենց կողմից արդեն իսկ իրականացրած վճարումների գծով: Հատուցման ենթակա դեպքերի համար չի թույլատրվում ապահովադրից (ապահովագրված անձից) գանձել կամ պահանջել որևէ վճար՝ բացառությամբ ապահովագրական գումարի ամբողջական սպառումից հետո առաջացող</p>				
--	--	---	--	--	--	--

		<p>պարտավորության դեպքերի կամ ապահովարի (ապահովագրված անձի) կողմից հատուցվող դեպքի բազային երաշխավորված պայմաններից ավելի պահանջներ ներկայացնելու դեպքում (օրինակ՝ պահանջել ավելի թանկարժեք դեղով կամ թանկարժեք սարքավորումով բուժում, քան հիմնականում կիրառվում է նման դեպքերում)՝ այդ տարբերության մասով:</p> <p><b>III. ԱՆՏՈՐՈՇԻՉ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԵՎ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p> <p>14. Հատուցման ենթակա են սուր, անհետաձգելի և պլանային դեպքերում ախտորոշման և բուժման ընթացքի վերահսկման նպատակով հիվանդանոցային բուժման համար իրականացվող լաբորատոր և գործիքային հետևյալ հետազոտությունները՝</p> <p>1) լաբորատոր</p> <ul style="list-style-type: none"> <li>ա. կլինիկական,</li> <li>բ. բիոքիմիական,</li> <li>գ. իմունաբանական,</li> <li>դ. մանրէաբանական,</li> <li>ե. հորմոնալ,</li> <li>զ. գենետիկական,</li> <li>է. պաթոհիստոլոգիական,</li> <li>ը. PCR,</li> <li>թ. այլ լաբորատոր հետազոտություններ.</li> </ul> <p>2) գործիքային՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա. ռենտգենաբանական (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),</li> <li>բ. համակարգչային տոմոգրաֆիա (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),</li> <li>գ. մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),</li> <li>դ. անզիոգրաֆիա, այդ թվում՝ կորոնարոգրաֆիա,</li> <li>ե. ուլտրաձայնային հետազոտություններ,</li> <li>զ. ռադիոիզոտոպային հետազոտություններ,</li> <li>է. ֆունկցիոնալ հետազոտում (ԷՍԳ, Էլեկտրամիոգրաֆիա, սպիրոգրաֆիա, դոպլեր, դոպլեքս հետազոտություններ և այլն),</li> <li>ը. էնդոսկոպիկ հետազոտություններ (էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա, կոլոնոսկոպիա, ցիստոսկոպիա, բրոնխոսկոպիա և այլն),</li> <li>թ. նեյրոֆիզիոլոգիական հետազոտություններ (ԷԷԳ, ԷխԷԳ, աուդիոմետրիա և այլն),</li> <li>ժ. դիագնոստիկ լապարատոմիա:</li> </ul> <p><b>IV. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՋՆՆՈՒՄԸ</b></p> <p>15. Կանխարգելիչ ընդհանուր բժշկական հետազոտություն՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Արյան ընդհանուր հետազոտություն լեյկոֆորմուլայով,</li> <li>2) Արյան բիոքիմիական հետազոտություն /գլյուկոզա, պրոթրոմբինային ինդեքս, խոլեստերին/,</li> <li>3) Մեզի ընդհանուր հետազոտություն,</li> </ol>				
--	--	---	--	--	--	--

		<p>4) Գործիքային քննություն (ԷՍԳ),  5) Ռենտգեն հետազոտություն. կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն՝ պարտադիր, այլ օրգան-համակարգերի ռենտգեն հետազոտություն՝ համապատասխան բժշկ-մասնագետի ցուցման դեպքում,  6) Որովայնի և փոքր կոնքի ուլտրաձայնային հետազոտություններ,  7) Ակնաբույժի խորհրդատվություն, տեսողության ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ ակնոցի դուրսագրում:  8) Թերապևտի խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում թերապևտի ուղեգրմամբ նեղ մասնագետների խորհրդատվություններ, և անհրաժեշտության դեպքում թերապևտի կամ նեղ մասնագետների ցուցմամբ սույն հավելվածի 3-րդ՝ «III. Ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները», բաժնով նախատեսված լաբորատոր և գործիքային հետազոտությունների իրականացում:  9) Կորոնարոգրաֆիա՝ համապատասխան բժշկ-մասնագետի ցուցման դեպքում,  10) Վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն,  11) Ներզատաբանի խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում վերջինիս ցուցմամբ վահանաձև գեղձի հորմոնալ հետազոտություն:  12) Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, մինչև 35 տարեկան կանաց բժշկի ցուցմամբ, իսկ 35 և ավել տարիքի կանաց՝ առանց ցուցման /պարտադիր/,  13) Պրոստատ-սպեցիֆիկ անտիգենը (prostate specific antigene, PSA) արյան հետազոտություն՝ 40 տարեկան և ավել տղամարդկանց համար:  Կանխարգելիչ բժշկական քննությունները պետք է իրականացվեն տարեկան մեկ անգամ՝ փաթեթի շահառուի կողմից ընտրված հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում և ենթակա են պարտադիր փոխհատուցման ապահովագրողի կողմից՝ շահառուի կողմից համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում: Ապահովագրական ընկերությունը իրավունք չունի ապահովագրողներին (ապահովագրված անձանց) պարտադրելու օգտվել ապահովագրական ընկերության կողմից նախընտրելի հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունից:</p> <p><b>V. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p> <p>16. Առողջության ապահովագրական փաթեթով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և փոխհատուցման ենթակա չեն՝  1) առանց բժշկական ցուցումների իրականացվող բժշկական ծառայությունները, դեղորայքը, հոսպիտալացումը.  2) հետևյալ հիվանդությունները և իրավիճակները՝  ա. տուբերկուլյոզ,  բ. հոգեկան հիվանդությունները, դրանց հետևանքները և սահմանային վիճակները (նևրոզ, փսիխոթերապիա, փսիխոզ և այլն), հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս,  գ. առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ,  դ. նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային</p>				
--	--	---	--	--	--	--

		<p>փորձաքննություն,      ե. ուռուցքաբանական հիվանդությունների քիմիաթերապևտիկ բուժում,      գ. վերականգնողական բուժօգնություն,      է. երիկամային խրոնիկ անբավարարության կապակցությամբ կատարվող հեմոդիալիզ,      ը. մանկաբարձական բուժօգնություն.      3) ցանկացած կանխարգելիչ և կազդուրիչ միջոցառումներ, այդ թվում իմունականխարգելիչ պատվաստումներ.      4) բնածին անոմալիաները և զարգացման արատները կամ անատոմիական առանձնահատկությունները, ժառանգական և զենետիկ հիվանդությունները՝ պարբերական հիվանդությունը, էպիլեպսիան, դեֆորմացիաները և քրոմոսոմային խանգարումները, մանկական ուղեղային պարալիչը.      5) քրոնիկ հիվանդությունները, որոնք պահանջում են մշտական, պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն (բացառությամբ ապահովագրության ժամկետի ընթացքում դրանց անհետաձգելի (կյանքին սպառնացող) սրացումների և բարդությունների).      6) շաքարային դիաբետ և նրա մշտական, պահպանողական բուժում պահանջող բարդությունները.      7) թոքերի քրոնիկ ոչ յուրահատուկ հիվանդությունները՝ թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ.      8) ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումները, դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունները, օստեոխոնդրոզը.      9) աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունները.      10) լյարդային անբավարարությունը.      11) քրոնիկական վիրուսակրությունը (այդ թվում՝ հեպատիտ B, C, D, E, F), բացիլակրությունը, պարազիտակրությունը.      12) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը.      13) ճառագայթային հիվանդությունները.      14) քաշի և խոսքի շտկումը, սեռի վիրաբուժական փոփոխումը.      15) կոսմետիկ, էսթետիկ կամ ապահովագրված անձի հոգեբանական վիճակը բարելավելու նպատակներով իրականացվող վիրահատությունները՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացածները.      16) մաշկի հիվանդության կապակցությամբ (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված՝ իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատությունները.      17) քթի միջնապատի դեֆորմացիաների և դրանց բարդությունների շտկումը, դրանց բարդացումները՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում դժբախտ պատահարի հետևանքով առաջացած կամ սուր շնչառական անբավարարություն առաջացնող դեպքերը.      18) աչքի էքսիմեր լազերային վիրահատությունները.      19) ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժման ու ախտորոշման</p>				
--	--	---	--	--	--	--

		<p>մեթոդները, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժումը, կազդուրման ավանդական համակարգերը, հեռաբժշկության հետ կապված ծառայությունները.</p> <p>20) սանատոր-առողջարանային բուժումը.</p> <p>21) վերականգնողական (ռեաբիլիտացիոն) բուժումը, ֆիզիոթերապևտիկ միջոցառումները և բուժումը.</p> <p>22) ներարգանդային սերմնավորումը և էքստրակորպորալ բեղմնավորումը.</p> <p>23) ռեպրոդուկտիվ (վերարտադրողական) ֆունկցիայի և էրեկտիլ դիսֆունկցիայի (իմպոտենցիա) հետ կապված հետազոտությունները և բուժումը, հակաբեղմնավորիչ կոնսերվատիվ միջամտությունները, այդ թվում՝ ՆԱՊ-ի տեղադրումը և հեռացումը, դիսմենորեան, հակաբեղմնավորիչ միջոցները.</p> <p>24) վերջույթների և դրանց առանձին սեգմենտների պրոթեզավորումը, էնդոպրոթեզավորումը՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքի.</p> <p>25) պրոթեզները, էնդոպրոթեզները, բժշկական սարքավորումները, իմպլանտները, տեսողական և լսողական սարքերը, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ, հաշմանդամային սայլակները, օրթոպեդիկ սարքերը, կենսասակտիվ հավելումները, կանխարգելիչ վիտամինաթերապիան, կոսմետիկ պարագաները: Սույն կետում նշված բացառությունները չեն վերաբերում՝  ա. սրտի վիրահատական միջամտություններին, այդ թվում՝ սրտի փականների պրոթեզներին, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտներին և այլն,  բ. ներանոթային միջամտություններին, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժման ժամանակ օգտագործվող միկրոկաթետերներ, միկրոպարոյրներ, օնիքս և այլն.</p> <p>26) ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը.</p> <p>27) ալկոհոլիզմը, թմրամոլությունը, թունամոլությունը և դրանց հետևանքով առաջացած հիվանդությունները.</p> <p>28) ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողությունների արդյունքում առաջացած վնասվածքները և հիվանդությունները:</p> <p><b>VI. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ՊԱՏՇԱՃ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p> <p>Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման դեպքում շահառուն իր հիմնավորված փաստարկներն է ներկայացնում Երևանի քաղաքապետարան, որից հետո վերջինս մեկ օրյա ժամկետում գրավոր ծանուցում է գնման պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը՝ թերությունները վերացնելու պահանջով, դրա համար սահմանելով հստակ ժամկետ: Ապահովագրական ընկերությունը սահմանված ժամկետում շահառուին պատշաճ ծառայություններ մատուցելու ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում, Երևանի քաղաքապետարանը ձեռնարկում է միջոցներ շահառուի համար սույն կարգով նախատեսված պատշաճ բուժօգնություն ապահովելու ուղղությամբ, որոնց ծախսերի ամբողջական հատուցումը</p>				
--	--	---	--	--	--	--

		<p>պարտավոր է իրականացնել գնման պայմանագիր կնքած անձը, եթե դեպքը վերջինիս կողմից ճանաչվել է որպես ապահովագրական պատահար եւ ենթակա է հատուցման:</p> <p><b>VII. ՇԱՀԱՌՈՒՆԵՐ</b></p> <p>Առողջության ապահովագրության շահառուներ են համարվում Երևանի քաղաքապետարանի, Երևան ենթակայության գրադարանների, թատրոնների և թանգարանների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողները, ինչպես նաև «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» փակ բաժնետիրական ընկերության, «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության, կառավարման տեխնոլոգիաների, Երևան հիմնադրամի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի աշխատողներ մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Երևանի քաղաքապետարան (ներառյալ Երևանի վարչական շրջանները, սոցիալական ծառայությունների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները),</li> <li>- «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ,</li> <li>- «Երևանտրանս» ՓԲԸ,</li> <li>- «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ,</li> <li>- «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ,</li> <li>- Երևան հիմնադրամ,</li> <li>- գրադարաններ,</li> <li>- թանգարաններ,</li> <li>- թատրոններ:</li> </ul> <p><b>Ընդամենը – մինչև 3128 մարդ:</b></p> <p><b>VIII. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ</b></p> <p>Պայմանագրի կնքման օրվանից ընկերության կողմից 10 օրացուցային օրվա ընթացքում շահառուներին տրամադրվում է առողջության ապահովագրության վկայագիր (որը ենթակա է սպասարկման ՀՀ տարածքի բոլոր բժշկական հաստատություններում), որն ուժի մեջ է մտնում տրամադրման օրը և գործում է 365 օր:</p>			
--	--	---	--	--	--

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՏԱՐՈՂ**

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված և չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	66511120/1	Առողջության ապահովագրություն՝ Երևանի քաղաքապետարան, Երևանի ենթակայության գրադարանի, թանգարանների, թատրոնների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատակիցների, ինչպես նաև «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման», «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաներ» և «Երևանտրանս» ՓԲԸ-ների, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, Երևանի հիմնադրամի աշխատողների համար	...	...	...	...	25	75	75	75	10	10	10	10	100 %
			%	%	%	%	%	%	%	%	0	0	0	0	%

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին"

\*\* հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ԿԱՏԱՐՈՂ**

-----  
 /ստորագրություն/  
 Կ.Տ

-----  
 /ստորագրություն/  
 Կ.Տ

Պայմանագրի կողմ

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«        » «        » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «        » «        » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «        » «        » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն  
Կ.Տ.



ԱԿՏ N  
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (վիաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

\_\_\_\_\_

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

\_\_\_\_\_

ստորագրություն



NOTICE  
ON OPEN TENDER

This text of the notice is approved by decision of the Open Tender Commission  
"2" of "03" "april" of 2020 and is published  
pursuant to Article 27 of the Law of the Republic of Armenia "On procurement"

Code of the open tender EQ-BMTsDzB-20/85

The contracting authority Yerevan municipality, located at the following address: the 1 Argishti Str, Yerevan, RA, gives notice for an open tender which shall be carried out in one stage, through Armeps ([www.armeps.am](http://www.armeps.am)) system of electronic procurement.

The bidder selected based on the results of the open tender will be proposed, in a prescribed manner, to conclude a contract for provision of for medical insurance services for Yerevan municipality (hereinafter referred to as "the contract").

Pursuant to Article 7 of the Law of the Republic of Armenia "On procurement", any person, irrespective of the fact of being a foreign natural person, an organisation or a stateless person, shall have equal right to participate in this tender.

The qualification criteria for the persons ineligible to participate in the tender, as well as for bidders, and the documents to be submitted for evaluation of those criteria shall be established by the invitation for this procedure.

The selected bidder shall be determined from among the bidders having submitted bids evaluated as satisfying the requirements of the invitation, by the principle of giving preference to the bidder having submitted the lowest price proposal.

For receiving the hard copy of the invitation to tender, it is necessary to apply to the contracting authority by 11:00 o'clock of the 42 day from the date of publication of this notice. Moreover, an application in writing must be submitted to the contracting authority for receiving the hard copy of the invitation. The contracting authority shall ensure the free of charge provision of the hard copy of the invitation (or in case of submitting, attached to the application, the copy of the document issued by the bank, attesting to the payment of AMD 1500 which may not exceed the amount of costs incurred for photocopying and delivering the invitation<sup>1</sup>) on the first working day following the receipt of such request. (The payment must be made to the account 247010087184 of "Departmental Buildings Operation and Maintenance" CSC in "Ardshinbank" <sup>2</sup>).

In case of a request to provide the invitation electronically, the contracting authority shall ensure the free of charge provision of the invitation electronically within the working day following the date of receipt of the application.

Failure to receive the invitation shall not limit the bidder's right to participate in this procedure.

The bids for the tender must be submitted electronically, through Armeps ([www.armeps.am](http://www.armeps.am)) system of electronic procurement, by 11:00 o'clock of the 42 day from the date of publication of this notice. The bids may, in addition to Armenian, also be submitted in English or Russian.

The bid opening will take place electronically, through Armeps system of electronic procurement, at 11:00 o'clock on the 42 day from the date of publication of this notice.

---

<sup>1</sup>The phrase specified in the brackets shall be removed where no fee is envisaged for provision of the invitation; otherwise the words "free of charge" shall be removed from the sentence.

